Մրցույթ՝ ՀՀ Սյունիքի մարզի «Արծվանիկի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի Ֆիզիկա (12 դասաժամ), տեխնոլոգիա (2 դասաժամ), կերպարվեստ (3 դասաժամ), երաժշտություն (9 դասաժամ), ինֆորմատիկա (9 դասաժամ), բնություն (4 դասաժամ), քիմիա (15 դասաժամ), կենսաբանություն (16 դասաժամ), շախմատ (4 դասաժամ), մաթեմատիկա (11 դասաժամ), դասվար (20 դասաժամ), դասվար (18 դասաժամ), հայոց լեզու, գրականություն (6 դասաժամ) ուսուցչի թափուր տեղերի համար

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝
- դիմում (ձև 1),
- 1 լուսանկար 3x4 չափի,
- բարձրագույն կրթությունը հաստատող փաստաթուղթ (դիպլոմ),
- անձը հաստատող փաստաթուղթ,
- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),
- ինքնակենսագրություն (ձև 5),
- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,
- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),
- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են 2024թ.-ի օգոստոսի 28-ից մինչև սեպտեմբերի 10--ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 08:30-ից 17:00-ը, բացի շաբաթ, կիրակի և ոչ աշխատանքային այլ օրերից:

Մրցույթը տեղի կունենա **2024 թ. սեպտեմբերի 16-ին՝ ժամը 15:00-ին**, Արծվանիկի միջնակարգ դպրոցում, հասցե՝ գ. Արծվանիկ փողոց 1, շենք 21: Տեղեկությունների համար զանգահարել 098-24-31-42 հեռախոսահամարով: